

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԵՂՐԱԶՈՐ ԵՎ ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

29.07.2014

Մարզի Մեղրաձոր և Արտավազ համայնքների հիմնախնդիրներին տեղում ծանոթանալու, ինչպես նաև համայնքների զարգացման հեռանկարային ծրագրերը բնակիչների հետ քննարկելու նպատակով հիշյալ համայնքներ է այցելել Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը:

Մեղրաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեղի ունեցած մոմավառությամբ մեկնարկած աշխատանքային այցելության հաջորդ կանգառը եղել է համայնքի մշակույթի կենտրոնը: Այստեղ Կոտայքի մարզպետին ներկայացվել են համայնքի մշակութային առօրյայի կազմակերպման հիմնական մոտեցումները, ինչպես նաև տեղեկություններ են տրամադրվել գործող մարզա-մշակութային խմբերի և վերջիններիս կազմում ընդգրկված սաների վերաբերյալ: Այնուհետև Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը Մեղրաձոր համայնքի ղեկավար Կ. Հովհաննիսյանի ուղեկցությամբ այցելել է համայնքի մանկապարտեզ, զրուցել աշխատակիցների հետ՝ անդրադարձ կատարելով նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքների և նրանց նկատմամբ անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերելու կարևորություններին:

<<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> ՓԲԸ-ում Կոտայքի մարզպետին ներկայացվել են բուժսպասարկման գործընթացի կազմակերպման ուղղությունները:

Կոտայքի մարզպետն ընդգծել է ինչպես Մեղրաձոր համայնքի, այնպես էլ տեղի բուժամբուլատորիայի կողմից սպասարկվող հարակից այլ համայնքների բնակիչներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման և առողջապահական հաստատության գործառույթների պատշաճ իրականացման առաջնահերթությունները:

Կոտայքի մարզպետը եղել է նաև Մեղրաձորի միջնակարգ դպրոցում: Կրթօջախի շենքային պայմաններին ծանոթանալուն զուգահեռ Ա. Հարությունյանը պատասխանատուների հետ քննարկել է կրթական գործընթացի արդյունավետության և ժամանակի պահանջներին համահունչ գիտելիքների տրամադրման գերակայությունները:

Մեղրաձորի համայնքապետարանում Կոտայքի մարզպետը ծանոթացել է համայնքային ծառայողների աշխատանքային առօրյային, զրուցել ինչպես վերջիններիս, այնպես էլ համայնքի բնակիչների հետ:

Արտավազ համայնքի ղեկավար Ռ. Հովհաննիսյանի ուղեկցությամբ Կոտայքի մարզպետն այցելել է համայնքում նոր կառուցվող մանկապարտեզի շինհրապարակ, զրուցել գործընթացի պատասխանատուների հետ՝ անդրադառնալով պետական հոգածությամբ կառուցվող նախակրթարանի շենքը որակական չափանիշների

համապատասխանությամբ և սահմանված ժամկետներում շահագործման հանձնելու անհրաժեշտությամբ:

Կոտայքի մարզպետը եղել է նաև Արտավազում կառուցված հանդիսությունների սրահում, զրուցել համայնքի բնակիչների հետ, պատասխանել նրանց կողմից տրվող հարցերին:

Աշխատանքային այցելությունն ամփոփվել է Արտավազի համայնքային կենտրոնում, որտեղ համայնքի ակտիվի հետ հանդիպման շրջանակներում քննարկվել են զարգացման զգալի նախադրյալներ ունեցող Արտավազում առաջիկայում նախատեսվող ծրագրային մոտեցումները, ինչպես նաև համայնքը զբոսաշրջային ենթակառուցվածքներով համալրելուն միտված նախաձեռնությունները: